ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«1» հունիսի 2023թ. No 18/1-9

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Ամուր ԳՍՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-23/2**

Մասնակից՝ **«Ամուր ԳՍՄ» ՍՊԸ**
/ՀՎՀՀ՝ 02844058, գործունեության հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի փ. 54ա/

Հայտնում եմ Ձեզ, որ 2023 թվականի ապրիլի 14-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Ամուր ԳՍՄ» ՍՊԸ-ի միջև կնքվել է N ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-23/2 ծածկագրով բնակտարածությունների մաքրման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր, սակայն Պատվիրատուի կողմից մատուցվող ծառայության ընթացքի և որակի ստուգման արդյունքում արձանագրվել են մի շարք խախտումներ (այդ թվում՝ աշխատակիցներին չեն տրամադրվել լվացող և մաքրման միջոցները, պատշաճ կերպով և ժամանակին չեն հնձվել և մաքրվել տարածքում առկա խոտերը, որոնց պատճառով վնասվել է ասֆալտապատ տարածքը, չեն տրամադրվել շների կացարանները մաքրելու համար անհրաժեշտ խոզանակներ և տարածքում տեղադրված չեն եղել աղբամաններ: Այդ ամենի մասին Կատարողին բանավոր կերպով բազմիցս զգուշացվել է): 2023 թվականի մայիսի 17-ի թիվ 1/18-2/29750-2023 գրությամբ վերը նշված խախտումների շտկման համար Ընկերությանը

տրվել է ողջամիտ ժամկետ՝ 1 աշխատանքային օր, սակայն առկա խնդիրների շտկման ուղղությամբ որևէ աշխատանք չի իրականացվել:

Վերը նշված հանգամանքը հանդիսանում է Կատարողի կողմից պայմանագրի էական խախտում, ուստի, հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 2.1.3 ա) և բ) ենթակետերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 33-րդ կետի 4-րդ ենթակետը՝ Պատվիրատուն ստիպված է եղել 2023 թվականի մայիսի 22-ին միակողմանի լուծել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Ամուր ԳՍՄ» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի ապրիլի 14-ին կնքված N ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-23/2 ծածկագրով պայմանագիրը:

1. Եզրահանգում

Վերոնշյալ կարգավորումների համատեքստում անդրադառնալով առկա փաստական հանգամանքներին՝ պետք է արձանագրել, որ ի հակադրություն պայ-մանագրի պահանջներին՝ որպես գնման գործընթացի մասնակից հանդես եկած «Ամուր ԳՍՄ» ՍՊԸ-ն, խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին «Ամուր ԳՍՄ» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատ-ճառաբանված որոշման հիման վրա, որոշում եմ «Ամուր ԳՍՄ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

6/1/2023

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054 ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am